## ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

### 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**1.1.Պայմանագիր**. Կողմերի միջև կնքված Վարկային գծի պայմանագիրը, որի անբաժանելի մասն են կազմում Բաժին 1-ը՝ Հատուկ Պայմանները, Բաժին 2-ը՝ Ընդհանուր Պայմանները, Սակագները, Համաձայնագիրը, դրանց փոփոխությունները և/կամ հավելվածները, ինչպես նաև Կողմերի միջև հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերը:

**1.2.Վարկատու**. «ՎԱՐԿՍ ԷՅ ԷՄ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն, ներառյալ՝ վերջինիս մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները:

**1.3.Վարկառու**. Վարկատուի ծառայություններից օգտվող ֆիզիկական անձ:

**1.4.Կողմ/եր**. Վարկառու և/կամ Վարկատու՝ Պայմանագրում նշված համատեղ կամ առանձին:

**1.5.Վարկային գծի սահմանաչափ**. Հատուկ Պայմաններով սահմանված Վարկի սահմանաչափ, որի շրջանակում Վարկառուն կարող է Հայտեր ներկայացնել Վարկի տրամադրման համար՝ համաձայն Պայմանագրի:

**1.6.Հնարավոր վարկային գծի սահմանչափ**. Սակագներով սահմանված Վարկի սահմանաչափ, մինչև որը Վարկային գծի սահմանաչափը կարող է աճել Վարկատուի հայեցողությամբ:

**1.7.Հայտ**. Պայմանագրի համաձայն Վարկային գծի սահմանաչափի շրջանակներում Վարկ ստանալու դիմում, որը ներկայացվում է Վարկառուի կողմից Վարկատուին՝ Պայմանագրով սահմանված կարգով:

**1.8.Վարկ**. Պայմանագրի համաձայն Վարկառուին սպառողական նպատակով տրամադրվող դրամական միջոցներ՝ ներառյալ Վարկատուի կողմից Վարկառուին տրամադրվող առաջին (Վարկառուի՝ Վարկատուից երբևէ ստացված առաջին) վարկը և/կամ կրկնվող (առաջինից բացի ցանկացած այլ, ներառյալ՝ այլ Պայմանագրի շրջանակներում ստացված) վարկ: Ընդ որում Վճարման ժամկետի ընթացքում Վարկային գծի սահմանաչափի շրջանակներում ստացված բոլոր գումարները համարվում են մեկ Վարկ:

**1.9.Հատկացված վարկ**. Պայմանագրի համաձայն Վարկառուին փաստացի տրամադրված ընդհանուր Վարկ (մնացորդ), մասնավորապես՝ Հատուկ Պայմաններում նշված գումար, որը Պայմանագիրը ստորագրելիս կամ դրանից հետո տրամադրվում է Վարկառուին և/կամ Վարկային գծի սահմանաչափի սահմաններում Հայտերի հիման վրա Վարկառուին տրամադրված Վարկ:

**1.10.Պայմանագրային վճարներ**. Պայմանագրի համաձայն Վարկի տրամադրման, սպասարկման և/կամ լրացուցիչ ծառայությունների հետ կապված վճարներ, ներառյալ՝ Տոկոսագումար, Տուժանքներ (Տույժեր, Տուգանքներ), այլ Վճարներ, ինչպես նաև Հատկացված վարկ, որոնք ենթակա են վճարման Վարկառուի կողմից Վարկատուին:

**1.11.Տարեկան անվանական տոկոսադրույք**. Վարկի տրամադրման դիմաց վճարվող և Հատկացված Վարկի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք, որը սահմանված է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով՝ հայտարարելով, որ տարին բաղկացած է 360 օրից:

**1.12.Տրամադրման վճար**. Կրկնվող Վարկի ձևակերպման և տրամադրման դիմաց վճարվող գումար, որը սահմանված է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով և հաշվարկվում է որպես տոկոս Վարկի նկատմամբ:

**1.13.Կանխիկի տրամադրման վճար**. Վարկը կանխիկ դրամով տրամադրելու դիմաց վճարվող գումար, որը սահմանվում է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով և հաշվարկվում է որպես տոկոս Վարկի նկատմամբ:

**1.14.Անհապաղ տրամադրման վճար.** Վարկը անհապաղ տրամադրելու դիմաց վճարվող գումար, որը սահմանվում է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով և հաշվարկվում է որպես տոկոս Վարկի նկատմամբ:

**1.15.Տարեկան փաստացի տոկոսադրույք.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված և Հատուկ Պայմաններում և/կամ Սակագներով նշված տոկոսադրույք:

**1.16.Տույժ**. Վճարման ժամկետի խախտման դեպքում վճարվող գումար, որը սահմանված է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով և հաշվարկվում է որպես տոկոս ընդհանուր պարտքի մնացորդի նկատմամբ, ներառյալ՝ Հատուկ Պայմաններով սահմանված Հատկացված վարկ, Տոկոսագումար և առկայության դեպքում՝ այլ Պայմանագրային վճարներ, բացառությամբ՝ Տուժանքներ:

**1.17.Տուգանք**. Վճարման ժամկետի խախտման դեպքում վճարվող միանվագ գումար, որը սահմանված է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով և հաշվարկվում է որպես տոկոս Հատկացված վարկի (մնացորդի) նկատմամբ:

**1.18.Վարկի ժամկետ**. Հատուկ Պայմաններով սահմանված Վարկի մարման օրերի քանակ:

**1.19.Վճարման ժամկետ**. Վարկ(եր)ի տրամադրման օրվանից մինչև Վճարման օրն ընկած ժամանակահատվածը:

**1.20.Վճարման օր**. Հատուկ Պայմաններով սահմանված օր, իսկ կիրառելի դեպքերում, Հետաձգման ժամկետի վերջին օր, մինչև երբ Վարկառուն պետք է Վարկատուին վճարի Հատկացված Վարկը, Տոկոսագումարը և Տրամադրման վճարը:

**1.21.Վճարման օրվա հետաձգում.** Վարկատուի կողմից իր ներքին իրավական ակտերի համաձայն, կիրառելի դեպքերում առաջարկվող լրացուցիչ ծառայություն՝ ուղղված Վճարման օրվա հետաձգմանը: Վարկատուի կողմից կարող են սահմանվել նաև Վճարման օրվա հետաձգման (ներառյալ՝ քանակի և/կամ պարբերականության) սահմանափակումներ և/կամ Վճարման օրվա հետաձգման հնարավորությունը պայմանավորող այլ գործոններ:

**1.22.Հետաձգման ժամկետ**. Վարկառուի պահանջով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում Վարկատուի կողմից տրամադրվող ժամանակահատված, որով հետաձգվում է Վճարման օրը՝ համաձայն Հատուկ և Ընդհանուր Պայմանների: Հետաձգման ժամկետը կարող է տարբեր լինել՝ կախված Հետաձգման վճարի չափից: Այն դեպքում, երբ Հետաձգման վճարը Վարկատուն ստանում է նախքան Վճարման օրը, Հետաձգման ժամկետը հաշվարկվում է ներառյալ Վճարման օրվանից, իսկ մնացած դեպքերում Հետաձգման ժամկետը հաշվարկվում է Հետաձգման վճարը Վարկատուի կողմից ստանալու օրվանից ներառյալ:

**1.23.Հետաձգման վճար**. Վճարման օրվա հետաձգման համար վճարվող միանվագ գումար, որը սահմանված է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով և հաշվարկվում է որպես տոկոս Հատկացված վարկի, Տոկոսագումարի և Տրամադրման վճարի մնացորդի նկատմամբ:

**1.24.Վարկատուի հաշիվ**. Հատուկ Պայմաններում նշված Վարկատուի ցանկացած բանկային հաշիվ:

**1.25.Վարկառուի հաշիվ**. Հատուկ պայմաններում նշված և/կամ Մասնաճյուղում գրավոր և ստորագրված դիմումով Վարկառուի կողմից ներկայացված ՀՀ դրամային ընթացիկ բանկային հաշիվ:

**1.26.Էլ-փոստ**. Հատուկ պայմաններում նշված և/կամ Մասնաճյուղում Վարկառուի կողմից գրավոր և ստորագրված դիմումով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցե, որի միակ օգտատերը Վարկառուն է:

**1.27.Հեռախոսահամար**. Հատուկ պայմաններում և/կամ Մասնաճյուղում Վարկառուի կողմից գրավոր և ստորագրված դիմումով ներկայացված հեռախոսահամար, որի միակ օգտատերը Վարկառուն է:

**1.28.Պորտալ**. Վարկատուի կայք (այս պահին՝ www.varks.am դոմենի անվամբ), որտեղ Վարկառուն անհատականացվում է Պրոֆիլի միջոցով և որտեղ տեղի է ունենում Կողմերի միջև փոխադարձ հաղորդակցությունը և տեղեկությունների փոխանակումը:

**1.29.Պրոֆիլ**. Պորտալում Վարկառուի անձնական էջ, որը հասանելի է Վարկառուի մուտքանվան և գաղտնաբառի մուտքագրմամբ:

**1.30.Մասնաճյուղ**. Վարկատուի կամ Վարկատուի կողմից լիազորված գործընկերոջ (առկայության դեպքում) ցանկացած գրասենյակ կամ վայր, որտեղ Վարկատուի անունից իրականացվում է վարկավորում և/կամ մատուցվում են այլ

## ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

առընչվող ծառայություններ: Մասնաճյուղերի ցանցը հասանելի է Մասնաճյուղում և Պորտալում:

**1.31.Սակագներ**. Վարկատուի կողմից հաստատված և Մասնաճյուղում և Պորտալում ևս հրապարակվող Վարկի տրամադրման և ծառայությունների մատուցման գործող պայմաններ և այլ լրացուցիչ առանձնահատկություններ:

**1.32.Համաձայնագիր**. Վարկառուի կողմից ստորագրվող փաստաթուղթ/համաձայնություն, որպես հաստատում/թույլտվություն Վարկատուի կողմից Վարկառուի տվյալների օգտագործման՝ Վարկառուի վարկունակության գնահատման և Պայմանագրի կնքման շրջանակներում որոշումների կայացման նպատակով, ինչպես նաև համապատասխան տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման:

**1.33.Օրենք**. Տվյալ հարաբերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության կիրառելի իրավական ակտ՝ վերջինով սահմանված դեպքերում և կարգով:

## 2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

**2.1.**Պայմանագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով: Մինչև Պայմանագրի ժամկետի ավարտը Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի դադարման վերաբերյալ մյուս կողմին չծանուցելու դեպքում յուրաքանչյուր անգամ Պայմանագիրը համարվում է վերակնքված տվյալ պահին գործող պայմաններով:

**2.2.**Պայմանագրով Վարկատուն Վարկային գծի սահմանաչափի սահմաններում պարտավորվում է տրամադրել Վարկ(եր) Վարկառուին՝ վերջինիս Հայտ(եր)ի հիման վրա և դրանց հաստատման դեպքում, իսկ Վարկառուն պարտավորվում է վերադարձնել Վարկ(եր)ը, ինչպես նաև դրա դիմաց վճարել Տոկոսագումար՝ համաձայն Տարեկան անվանական տոկոսադրույքի, և այլ Պայմանագրային վճարները (առկայության դեպքում): Կրկնվող Վարկերի դեպքում Վարկառուն Հայտը ներկայացնում է Ընդհանուր Պայմանների 2.3 կետով սահմանված կարգով, որի դեպքում Կողմերի միջև նոր փաստաթուղթ չի ստորագրվում:

**2.3.**Վարկառուն Հայտը կարող է ներկայացնել՝ 1)Մասնաճյուղում, 2)զանգահարելով Հեռախոսահամարից՝ նշելով Վարկառուի անուն ազգանունը, Պայմանագրի համարը, Վարկի գումարը, որը ցանկանում է ստանալ, վարկի տրամադրման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ և անհապաղ կամ 14 օրացուցային օր հետո) և Վճարման օրը, կամ 3)Պորտալում՝ Պրոֆիլի միջոցով էլեկտրոնային եղանակով լրացնելով Հայտը:

**2.4.**Վարկատուն միակողմանի որոշում է Հայտի բավարարման կամ մերժման հարցը՝ նաև հաշվի առնելով իր կողմից կամ երրորդ՝ լիազորված անձանց օգնությամբ կատարվող Վարկառուի վարկունակության (վճարունակության) գնահատումը և/կամ Վարկառուի կողմից Պայմանագրային պարտավորությունների կատարումը:

**2.5.**Անհրաժեշտ տեղեկատվության/փաստաթղթերի ստացումից հետո առանց ուշացման Վարկատուն տեղեկացնում է Վարկառուին Հայտի հաստատման կամ մերժման մասին: Հայտի հաստատման դեպքում Վարկառուի կողմից Պրոֆիլի միջոցով կամ առձեռն ընդունվում են Հատուկ Պայմաններում կատարված փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնում Վարկի փաստացի տրամադրման պահից: Վարկառուն գիտակցում է, որ նման փոփոխությունները կատարվում են իր կողմից Հայտ ներկայացնելու հետևանքով և համաձայնվում է դրանց կատարմանը սույն կետով սահմանված կարգով՝ առանց լրացուցիչ համաձայնեցման կամ փաստաթղթերի ստորագրման: Վարկի փաստացի տրամադրումը (հավաստող համապատասխան վճարային փաստաթուղթը) ևս հաստատում է սույն կետում նշված հանգամանքները: Անկախ սույն կետում նշված կարգավորումից Հայտի բավարարումը նաև կարող է հաստատվել Կողմերի միջև փոփոխված Հատուկ Պայմանների ստորագրման միջոցով (առաջին Վարկի դեպքում Վարկառուի կողմից Հատուկ Պայմանների ստորագրումը պարտադիր է):

**2.6.**Կրկնվող Վարկերի դեպքում, Վարկատուն պարտավոր է տրամադրել Պայմանագրի թղթային տարբերակը Վարկառուի պահանջի դեպքում 15 աշխատանքային օրվա ընթացքում, առանց վճարի և երկկողմ ստորագրումից հետո:

**2.7.**Վարկատուն Վարկառուի ցանկությամբ պետք է տրամադրի յուրաքանչյուր Վարկ կանխիկ՝ Մասնաճյուղում կամ փոխանցի այն Վարկառուի հաշվին: Վարկատուի կողմից Կանխիկի տրամադրման պահանջ և Կանխիկի տրամադրման վճարը չստանալու դեպքում Վարկատուն Վարկի գումարը փոխանցում է Վարկառուի Հաշվին: Վարկառուի հաշվին Վարկի գումարը փոխանցելու դեպքում Վարկը համարվում է տրամադրված Վարկառուի կողմից բանկային փոխանցում կատարելու օրը: Վարկը տրամադրվում է Վարկառուին Հայտի հաստատման դեպքում՝ 1)Անհապաղ՝ Վարկառուի պահանջով և վերջինիս կողմից Անհապաղ տրամադրման վճարը վճարվելու դեպքում՝ անմիջապես Մասնաճյուղում կամ բանկային փոխանցմամբ՝ մինչև 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում, որը Պայմանագրի իմաստով համարվում է անհապաղ տրամադրում, 2)14 (տասնչորս) օրացույցային օր հետո՝ Վարկառուի պահանջով Մասնաճյուղում կամ բանկային փոխանցմամբ:

**2.8.**Վարկային գծի սահմանաչափի սահմաններում Վարկառուն իրավունք ունի անսահմանափակ նոր հայտեր ներկայացնել: Վարկային գծի սահմանաչափը լրանալու դեպքում Վարկառուն իրավունք ունի նոր Հայտ ներկայացնել Հատկացված վարկի ամբողջական մարման դեպքում:

**2.9.**Այն դեպքում, երբ Վարկառուն ամսվա վերջին օրացուցային օրվա դրությամբ չի օգտագործել Վարկային գծի սահմանաչափը ամբողջությամբ, Վարկային գծի սահմանաչափի չօգտագործված մասը Վարկատուի կողմից կարող է զրոյացվել միակողմանի կերպով՝ համաձայն իր ներքին իրավական ակտերի: Նոր Վարկային գծի սահմանաչափ կորոշվի Վարկատուի կողմից միակողմանիորեն՝ Վարկառուի նոր Հայտի հաստատման դեպքում:

## 3.ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

**3.1.Տոկոսագումար**

Տոկոսագումար. գումար, որը Վարկառուն պետք է Վարկատուին վճարի Վարկի դիմաց՝ Հատուկ պայմաններով սահմանված Տարեկան անվանական տոկոսադրույքի համաձայն: Տոկոսագումարը ենթակա է վճարման Վարկառուի կողմից Վճարման օրը: Տոկոսագումարը հաշվարկվում է Վարկի ողջ ժամկետի ընթացքում՝ սկսած Վարկի տրամադրման օրվանից մինչև Հատուկ պայմաններով սահմանված Վճարման օրը:

**3.2.Տուժանքներ**

**3.2.1. Տույժեր**

Վարկառուի կողմից Վճարման ժամկետը խախտելու դեպքում կիրառվում է ժամկետանց վճարման Տույժ: Նման դեպքում Տույժը հաշվարկվում է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար՝ Վճարման օրվանից սկսած մինչև ընդհանուր մնացորդի մարման օրը ընկած ժամանակահատվածը: Վարկատուն իրավունք ունի, համաձայն իր ներքին իրավական ակտերի, կիրառել տույժերի հաշվարկման արտոնյալ ժամկետ (ժամկետ, որի ընթացքում Տույժեր չեն հաշվարկվում):

**3.2.2. Տուգանքներ**

Վարկառուի կողմից Վճարման ժամկետը խախտելու դեպքում կարող է կիրառվել Տուգանք՝ համաձայն Վարկատուի ներքին իրավական ակտերի: Տուգանքը միանվագ գումար է, որը հաշվարկվում է Հատուկ Պայմաններով և/կամ Սակագներով սահմանված չափով և կարգով:

**3.3.Հիմնական վճարներ**

**3.3.1.Տրամադրման վճար**, որը Վարկառուն միանվագ վճարում է կրկնվող Վարկի դիմաց և ենթակա է Վարկառուի կողմից վճարման Վճարման օրը:

**3.4.Լրացուցիչ վճարներ**

**3.4.1.Կանխիկի տրամադրման վճար**, որը Վարկառուն պետք է վճարի կրկնվող Վարկը կանխիկ դրամով ստանալու նպատակով:

**3.4.2.Անհապաղ տրամադրման վճար**, որը Վարկառուն պետք է վճարի կրկնվող Վարկը անհապաղ ստանալու նպատակով:

## ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**3.4.3.Հետաձգման վճար**, որը Վարկառուն վճարում է իր պահանջի հիման վրա կամ Պայմանագրով սահմանված այլ դեպքերում Վճարման օրվա հետաձգման համար:

**3.4.4. Վերակառուցման վճար**, որը Վարկառուն վճարում է Վարկի վերակառուցման դեպքում. Վարկառուի կողմից Վճարման ժամկետի խախտման դեպքում Վարկատուն կարող է առաջարկել Վարկի վերակառուցում (պայմանների փոփոխություն)՝ համապատասխան Վերակառուցման վճարի դիմաց՝ համաձայն իր ներքին իրավական ակտերի:

**3.4.5.** ***Լրացուցիչ վճարները միանվագ վճարներ են, որոնք կատարվում են բացառապես Վարկառուի ընտրությամբ և ցանկությամբ՝ Վարկատուի կողմից առաջարկվող լրացուցիչ ծառայությունների համար և պարտադիր չեն Վարկի տրամադրման համար: Նախքան Վճարման ժամկետի ավարտը պարտավորությունները կատարելու դեպքում Լրացուցիչ վճարները ենթակա չեն նվազեցման/վերադարձման:***

**3.5.**Վարկատուն իրավունք ունի Վարկառուին տրամադրել առաջին Վարկը անվճար: Վարկատուն իրավունք ունի չհաշվեգրել, նվազեցնել կամ կանգնեցնել Վարկի Տոկոսագումարի, Տույժերի, Տուգանքների և այլ Պայմանագրային վճարների հաշվարկը՝ համաձայն Վարկատուի ներքին իրավական ակտերի:

**4.ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**4.1.**Վարկառուն Վարկատուին վճարում է Պայմանագրի սահմաններում և միայն Վարկի տրամադրման դեպքում:

**4.2.**Վարկառուն պետք է կատարի Պայմանագրային վճարները Վճարման ժամկետում Վարկատուի բանկային հաշվին փոխանցում կամ որևէ այլ եղանակով վճարում կատարելով կամ կանխիկ վճարելով Մասնաճյուղում՝ նշելով վճարման մանրամասները. 1)Վճարման ժամկետը Հետաձգելու դեպքում՝ §Հետաձգում, Պայմանագրի համարը¦, կամ 2) այլ Պայմանագրային վճարների դեպքում առնվազն՝ Պայմանագրի համարը:

**4.3.**Վճարման օրվա հետաձգման համար Վարկառուն Վարկատուին վճարում է միայն Հետաձգման վճար, իսկ Վճարման օրը վճարվող Պայմանագրային վճարները հետաձգվում (կասեցվում) են և չեն հաշվարկվում Հետաձգման ժամկետի ընթացքում: Հետաձգված Պայմանագրային վճարների վճարումը Հետաձգման ժամկետի ընթացքում չի համարվում ուշացում:

**4.4.*Վարկառուն ցանկացած ժամանակ իրավունք ունի նախքան Վճարման ժամկետի ավարտը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) Վարկը, Տոկոսագումարները և կատարելու այլ Պայմանագրային վճարները՝ համաձայն Օրենքի:***

**4.5.*Վարկի վաղաժամկետ մարման դեպքում Վարկատուն հետ է վճարում/նվազեցնում է Վարկի փաստացի չօգտագործված ժամկետի համար (ներառյալ՝Վարկառուի կողմից նախապես վճարված) Տոկոսները (առկայության դեպքում)՝ չօգտագործված ժամկետի համամասնությամբ:*** Նշված գումարը վճարվում է Վարկառուին վերջինիս գրավոր դիմումի հիման վրա (կանխիկ կամ փոխանցումով) 3 (երեք) բանկային օրվա ընթացքում:

**4.6.**Վարկառուի կողմից Պայմանագրային վճարները համարվում են կատարված Վարկատուի կողմից դրանց ստանալու պահից: Վարկառուի կողմից Պայմանագրի պայմաններին չհամապատասխանող վճարումը չի համարվում ստացված մինչև դրա նույնականացումը:

**4.7.**Վարկատուն, եռօրյա ժամկետում, Վարկառուին վերադարձնում է կիրառելի Պայմանագրային վճարների ավել վճարված մասը Վարկառուի գրավոր դիմումի հիման վրա և Վարկառուի կողմից նշված եղանակով:

**4.8.**Վարկատուի նկատմամբ Վարկառուի Պայմանագրային վճարները (եթե այլ բան սահմանված չէ) մարվում են հետևյալ հերթականությամբ՝ 1)Տուգանքներ, այնուհետ՝ Տույժեր (Վճարման ժամկետը խախտելու դեպքում), 2) Հետաձգման վճար՝ վճարման նպատակ դաշտում հստակ սահմանված լինելու դեպքում և/կամ երբ Վարկառուի կողմից կատարած առանձին վճարը բավարար չէ համաձայն վճարման նպատակի Հետաձգում կատարելու համար կամ մինչև Վճարման օրը ընկած 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում կատարելու դեպքում Պայմանագրային վճարների մնացորդն ամբողջությամբ մարելու համար, կատարվում է Վճարման օրվա հետաձգում հնարավոր առավելագույն օրերի քանակով՝ համաձայն Հատուկ պայմանների, 3) Վերակառուցման վճար, 4) Տրամադրման վճար, 5) Տոկոսագումար, 6) Հատկացված վարկ:

**5.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**5.1.**Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ համաձայն Օրենքի: Պայմանագրի լուծման դեպքում Վարկառուն պարտավոր է մարել (վերադարձնել) կիրառելի Պայմանագրային վճարները: Պայմանագրի միակողմանի լուծման համար Վարկառուն դիմում է ներկայացնում Վարկատուին՝ նշելով իր անունը, ազգանունը և Պայմանագրի համարը: Նման ծանուցման բացակայության դեպքում Պայմանագիրը չի համարվում լուծված: Սույն կետով սահմանված ժամկետի ավարտից հետո Վարկառուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում Վարկատուն, Օրենքին համապատասխան և Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով, կարող է Վարկառուի նկատմամբ կիրառել համապատասխան վճարներ:

**5.2.**Վարկառուի դիմումի հիման վրա կամ Վարկատուի նախաձեռնությամբ Վարկային գծի սահմանաչափը կարող է ավելանալ Հնարավոր վարկային գծի սահմանաչափի սահմաններում Վարկատուի կողմից Վարկառուի (վարկունակության) վճարունակության գնահատման միջոցով և համաձայն Վարկատուի ներքին իրավական ակտերի: Վարկատուն կարող է չավելացնել Վարկային գծի սահմանաչափը կամ պակասեցնել այն, կամ զրոյացնել համաձայն Ընդհանուր պայմանների 2.9.կետի, եթե Վարկատուի կարծիքով Վարկառուի վճարունակությունը փոխվել է: Վարկային գծի սահմանաչափի փոփոխությունը կատարվում է Վարկատուի կողմից միակողմանիորեն և չի կարող ազդել Հատկացված վարկի կամ դրա մարման պայմանների վրա:

**5.3.**Վարկատուն կարող է միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել Վարկառուից անհապաղ վաղաժամ վերադարձնել Հատկացված վարկը և վճարել այլ Պայմանագրային վճարները, եթե 1) Վարկառուն տրամադրել է ոչ ճիշտ, թերի, հնացած կամ ապակողմնորոշիչ տվյալներ, և/կամ կեղծ փաստաթղթեր կամ Վարկատուի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացրել Վարկատուի կողմից պահանջվող փաստաթղթերը, 2) Վարկառուն խախտել է Վճարման ժամկետը ավելի քան 7 օրացուցային օրով, 3) Վարկառուն խախտել է Պայմանագրով սահմանված իր որևէ այլ պարտավորություն, 4) Նշանակալից հանգամանքներ փոխվել են, որոնք հանդիսացել են Պայմանագրի կնքման հիմք, 5) Վարկառուի դեմ դատարան հայց է ներկայացվել, նրա նկատմամբ հարուցվել է քրեական գործ, 6) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման որևէ կասկածի դեպքում, 6)ներկայացվել է նրան սնանկ ճանաչելու դիմում, 8) Պայմանագրի դադարման, այդ թվում՝ միակողմանի լուծման դեպքում, կամ 9) Վարկատուն գնահատել է Վարկառուի վճարունակությունը որպես անբավարար և Վարկառուի կողմից Հատկացված Վարկի վերադարձման բարձր ռիսկ է բացահայտել:

**5.4.**Վարկատուն իրավունք ունի առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության 1) Պայմանագրից բխող իրավունքները (պահանջները) և/կամ պարտականությունները փոխանցել ցանկացած երրորդ անձանց (ցեսիոնարներ), 2) ցեսիոնարները հետագայում իրավունք կունենան դրանք փոխանցել անսահմանափակ թվով երրորդ անձանց, 3) Վարկատուն և

## ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ցեսիոնարներն իրավունք ունեն վերոնշյալ երրորդ անձանց բացահայտել Պայմանագրի կնքման համար տրամադրված տեղեկությունները, 4) Վարկատուն և վերոնշյալ երրորդ անձինք պարտավոր չեն Վարկառուին տեղեկացնել նշված փոխանցման մասին, ուստի Վարկառուն պարտավոր է շարունակել կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները Վարկատուին, եթե Վարկատուն այլ բան չի ծանուցել Վարկառուին:

**5.5.**Վարկատուն իրավունք ունի ստեղծել Վարկառուի վարկային պատմություն նրա պարտավորությունների վերաբերյալ և կարող է այդ տեղեկությունները տրամադրել Վարկառուի այլ վարկատուներին և/կամ նոր պարտատերերին (ցեսիոնարների), այդ թվում ապագա:

**6.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**6.1.**Վարկառուն հաստատում է, որ ներկայացնում է լիարժեք և հավաստի տվյալներ, որոնք անհրաժեշտ են իր հետ կապ հաստատելու համար և, որ իր կողմից Վարկատուին տրամադրված հասցեները, Էլ-փոստը, Հեռախոսահամարը և կապի այլ միջոցները, ինչպես նաև Պրոֆիլը վերահսկվում են իր կողմից, Վարկառուն կրում է վերջիններիս օգտագործումից բխող ռիսկերը և դրանցով հնարավոր է արդյունավետորեն կապվել իր հետ: Վարկառուն պետք է պատշաճ կերպով ծանուցի Վարկատուին Պայմանագրում նշված իր տվյալների, անձը հաստատող փաստաթղթի և/կամ աշխատավայրի փոփոխության մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան Վարկատուի հետ ցանկացած նոր գործարքից առաջ՝ կրելով վերջինից բխող ռիսկերը: Վարկատուն պատասխանատվություն չի կրում Վարկառուի տրամադրած կապի միջոցներով տեղեկություններ ուղարկելու հետևանքով բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների բացահայտման համար:

6.2.Վարկատուն կարող է պահանջել Վարկառուից 1) հաստատել տվյալների փոփոխությունը հեռախոսով՝ Հեռախոսահամարի օգտագործմամբ կամ Պորտալում, Մասնաճյուղում կամ Վարկատուի կողմից ընդունելի այլ եղանակով, 2) հավելյալ տեղեկատվություն և փաստաթղթեր՝ կապված Պայմանագրի և Վարկի տրամադրման և հետագա սպասարկման հետ, 3) տեղեկատվություն՝ կապված Վարկառուի վճարունակության հետ, 4) տեղեկատվություն՝ կապված Վարկառուի նույնականացման և/կամ Վարկառուի դրամական միջոցների հետ՝ մինչ վերոնշյալ տեղեկատվության տրամադրումը չկատարելով պահանջվող գործարքը: Վարկառուի հաշվի փոփոխությունը կատարվում է բացառապես Մասնաճյուղում՝ Վարկառուի ստորագրությամբ:

**6.3.**Վարկառուի անհատականացումը կամ նրա հետ Պայմանագրի սահմաններում հաղորդակցությունը (գրավոր տեղեկացում, հիշեցում, առաջարկ, պահանջ, հաստատում, մերժում և այլն) պարտավորեցնող է Կողմերի համար, եթե այն տեղի է ունեցել Մասնաճյուղում առերես, Հեռախոսահամարի, Վարկառուի Էլ-փոստի կամ Պրոֆիլի միջոցով: Սպասարկման որակը բարձրացնելու և գործարքների անվտանգությունն ապահովելու համար Վարկատուն իրավունք ունի ձայնագրել, տեսագրել, էլեկտրոնային եղանակով կամ այլ կերպ պահպանել Վարկառուի հետ հարաբերությունների ընթացքի մասին տվյալները: Վարկառուն ընդունում է, որ վերոհիշյալ տեղեկությունները ծառայում են որպես ապացույց՝ վիճելի հարցերի կարգավորման համար:

**6.4.** Այն դեպքում, երբ Վարկառուն առաջին անգամ Հայտ է ներկայացնում Վարկատուին, ավտոմատ կերպով գրանցվում է Պրոֆիլ: Վարկառուի անհատականացումը և նրա հետ հաղորդակցությունը Պրոֆիլի միջոցով պարտադիր է Կողմերի համար: Պրոֆիլն օգտագործվում է Պորտալի Օգտագործման Պայմանների համաձայն, որոնք հասանելի են Պորտալում և կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը:

**6.5.**Վարկատուն կարող է կասեցնել կամ դադարեցնել Վարկառուի անհատականացումը և/կամ իր հետ հաղորդակցությունը հեռախոսով՝ Հեռախոսահամարի օգտագործմամբ կամ Պորտալում Պրոֆիլի միջոցով և պահանջել, որ որոշակի գործողություններ կատարվեն բացառապես Մասնաճյուղում:

**6.6.**Այն դեպքում, երբ համաձայն Հատուկ Պայմանների Վարկառուն ընտրում է Օրենքով և/կամ Պայմանագրով սահմանված պարտադիր ծանուցման ենթակա տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ստանալու տարբերակը, ապա ծանուցումը համարվում է կատարված Վարկատուի կողմից համապատասխան տեղեկատվական համակարգի միջոցով ուղարկման պահից:

**6.7.**Պայմանագրից բխող վեճերը ենթակա են ՀՀ դատարանների քննությանը: Սույնով Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրից բխող վեճերով գործերի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել: Կողմերը համաձայնում են, որ Պայմանագրից բխող վեճերով հայցերը Վարկատուի ընտրությամբ կարող են հարուցվել ՀՀ ցանկացած իրավասու դատարան: Կողմերը նաև տալիս են իրենց համաձայնությունը վեճերի դատական կարգով քննության դեպքում գործով արագացված դատաքննության կիրառման համար: Վարկառուն իրավունք ունի նաև դիմել ՀՀ Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Սույնով Վարկառուն տեղեկացվում է, որ Վարկատուն չի կնքել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

**6.8.**Վարկատուն իրավունք ունի միակողմանի փոփոխություններ կատարել Պայմանագրում, մասնավորապես՝ Ընդհանուր պայմաններում, Հատուկ պայմաններում, Սակագներում և Կողմերի Պայմանագրային հարաբերությունները կարգավորող այլ փաստաթղթերում: Այդ մասին Վարկատուն տեղեկացնում է Վարկառուին նրա հետ համաձայնեցված եղանակով, այդ թվում Պրոֆիլի միջոցով՝ համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցում ուղարկելով: Օրենքով և Պայմանագրով թույլատրելի դեպքերում սույն կետով սահմանված ծանուցումները համարվում են պատշաճ կատարված Պորտալում սահմանված կարգով հայտարարություն հրապարակելու միջոցով: Նշված փոփոխությունները համարվում են Վարկառուի կողմից ընդունված, երբ Վարկառուն մինչև դրանց ուժի մեջ մտնելը գրավոր չի առարկում նշված փոփոխությունների դեմ, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ նշված փոփոխությունների հրապարակումից հետո նոր Հայտ է ներկայացնում: Վարկառուն լիազորում և կարգադրում է Վարկատուին ձեռնարկել անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ ի շահ Վարկառուի կամ ոչ էական բնույթ կրող (թվաբանական սխալների, տառասխալների և այլ վրիպակների ուղղում, ծառայությունների անվանումների խմբագրումներ, ծառայությունների վճարների նվազեցում կամ վերացում, տեքստի խմբագրումներ և այլն) բոլոր փոփոխություններն ուժի մեջ դնելու համար՝ առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության կամ ստորագրության:

**6.9.**Վարկատուն պատասխանատվություն չի կրում, եթե սույն պայմանագրային դրույթները խախտվել են երրորդ անձանց կողմից իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով:

**6.10.**Վարկառուն սույնով հաստատում է, որ Պայմանագրով հանդես գալով որպես Կողմ, հանդիսանում է իրական շահառու:

**6.11.*Վարկառուն նաև թույլատրում է Վարկատուին մշակել և ստուգել իր կողմից տրամադրված տվյալները՝ այդ նպատակով հարցումներ կատարելով և տեղեկություններ տրամադրելով էլեկտրոնային տվյալների շտեմարաններ, և այլ անձանց՝ Վարկատուի և Վարկառուի միջև կնքված պայմանագրերի գործողության ընթացքում և դրանից հետո:***

**6.12.**Վարկառուն տեղեկացված է և համաձայն է, որ Վարկատուն իրավունք ունի փոխանցել Պայմանագրից բխող

## ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

պարտավորությունները Վարկատուի հետ փոխկապակցված անձին կամ խմբին՝ առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության: